Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Ջրառ» ՓԲԸը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ազատի ջրամբարի հատակային ջրթողի էլ.մոնտաժային աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԾՁԲ-18/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018թվականի նոյեմբերի 12-ին կնքված N «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԾՁԲ-18/5-1 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 21-ին կատարված փոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1: պայմանագրի կատարումը տեղափոխվում է հաջորդ բյուջետային տարի:

Փոփոխության նկարագրություն: պայմանագրում ավելացվել է նոր կետ կանխավճար տրամադրելու վերաբերյալ:

Փոփոխության հիմնավորում: «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԾՁԲ-18/5-1 ծածկագրով պայմանագրի 7.5 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 56-րդ կետի 6-րդ ենթակետը

Պատվիրատու՝ «Ջրառ» ՓԲԸ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
12.11.2018թ ԿՆՔՎԱԾ N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԾՁԲ-18/5-1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԶԱՏԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՀԱՏԱԿԱՅԻՆ ՋՐԹՈՂԻ ԷԼ.ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» «դեկտեմբերի» 2018թ.

ՀՀԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Կ. Եփրեմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա. Մարտիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 25.10.2018թ կնքված NՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԾՁԲ-18/5-1 ծածկագրով «Ազատի ջրամբարի հատակային ջրթողի էլ.մոնտաժային աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 56-րդ կետի 6-րդ ենթակետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Փոխադարձ համաձայնությամբ կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 կետից հետո ավելացնել նոր 4.1.1 կետը հետևյալ բովանդակությամբ՝
«4.1.1 Պայմանագրի գնի 19762 (տասնինը հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ	<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա	ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621	Հ/Հ 1150000088680300
Տնօրեն	ՀՎՀՀ 00012859
_____ Կ. Եփրեմյան	_____ Ա. Մարտիկյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ. S.	Կ.S.